21. ՀԵԼՈՒԶԱԿ ԹԱԳՈՒՀԻՆ

Արևելյան կողմ մե քաղաք կա, մե թաքավոր. էդ թաքավորը մե տղա ուներ։ էդ տղեն իրեք տարի կարդաց, ավարտեց։ Էնպես քաջ դուրս էկավ որ՝ ձեռ քցում էր հ'ընկերներին. թևերը մնում էր իրան ձեռը, հ'ընկերները ընկնում, մեռնում ին։

Էդ տղի զարպին՝ գանգատավոր էլավ քաղաքացին.— Ջենք կարա քաշի նրա ձեռը, որ էրեխից կտրեց մեղի։

Թաքավորը աքսորեց իրան էրեսից։ Տղեն էլավ, իրան մե ձի վերցրեց, մե ձեռք ասպապ՝ գնաց, ընկավ երկրե-երկիր, ղուշ ուշ-մազ՝ ֆերվան ֆյոչմազ[1], շատ ու քիչ աստված գիտա, գնաց մե քոշք ու սարի ըռաստ էկավ։ Տեսավ մե աղջիկ սարի ակուշկից կախ էր ընկեր։

— Խողածի'ն,— ասաց,— օձն ուր պորտով, խավքն ուր թևով էս տեղրանք ման չէր գար, դու ի՞նչպես ես ման գալում։

— Քո սերն ընձի բերեց։

— Խողածի'ն, գնա' ըստուց, մկա Բոզ դևը կգա, քո մեծ փերթն քո ականշ կթողի։

— Խնդրում եմ, էդ ախ ընձի մի' տուր, սիրելի', մե կտոր խաց տո'ւր, ես ուտեմ, իմ ճանապարհով էթամ։

---

1 Ա'չ թռչուն կթռչի, ո'չ կարավան կրանի (Ս. Ռ.)։

Աղջիկը խաց իջացրեց շրտով, կերավ, ասաց.— Աղջի՛, Բոզ դևը ո՞ր սարը գնացեր ա, որ ես չէթամ։

— Էդ առաջիդ սարն ա, որ տեսնում ես։

Տղեն էլավ, մախսուս էն սարով գնաց։ Գնաց, տեսավ Բոզ դևը մե զերան դրեր թևին, մե նախիր ճին ու ջանավար առեջը՝ գալում ա։

— Բա՛րև,— ասաց,— խողածին, էս օխտը տարի ա, իմ ատամ ցավում ա, խողածնի միսը իմ ատմին դեղ են ասե։

— Էդ ատմի ցավը հա՛ էդպեսդ պըտի մնա։

— Դու խողածին ես, էդպեսդ ամպախ-զամպախ մի՛ խոսա։

Ասեց, իր ձեռքի գերանով տղին մե զարկեց։ Աստված պահեց։ Տղեն քաշեց թուրը, խասավ ըդու, գլոխը կտրեց, հ՚ակնջները վերցրեց, քցեց խուրճինը, էկավ աղջկա կուշտը, ասեց.

— Աղջի՛, դուռը բաց, էս էլ դևի հ՚ակնջներ։

Աղջիկը ձեռաց էլավ, օթախները վարդաջրեց, անուշահոտն ընկավ օթախների մեջ, անուշ-անուշ կերակուլներ էփեց, կերան ու էլան քնան։

Աղջիկը ասեց.— Ես քեզի խամար սպասում էի։

— Դրուստ ես ասըմ, ես քեզի հ՚առաջի խետ «քուր» եմ ասեր։

— Օր դու «քուր» ես ասեր, ախիրաթտա[1] իմ աղբերն ես։

Քուր ու աղբոր պես քնան։

Առավոտուն լուսը բացվավ, տղեն ձինը ղուս քաշեց, խնծալի

Քուրը ասեց.— Էդ ճամփխով մի՛ գնար, Կարմիր դևի մեքյան ա։

— Գրաի էթամ, անկարելի ա։

Ղանչեց աստված, գնաց։

Դար ղուպա, դյարպանտ բե ղուպա, հ՚ընկավ ճամփախ, ղանչեց ուր աստվածը, մե քոշք ու սարի ըռաստ էկավ։ Տեսավ ակուշկից մե նազանի կախ ա հ՚ընկեր, բարև տվեց, աղջիկ բարևն առավ։

— Խազար բարի էկար, խողածի՛ն, մարդ ըս տեղրանք չէթ կարող գար, ի՞նչպեսդ էկար։

— Աղջի՛, ի՞նչ կխարցնես, սոված իմ, մե թքյա խաց տո՛ւ, ուտիմ։ Աղջիկը իմցավ որ սոված ա, խաց տվեց։

---

1 Ծհավիտյան (Ծ. Բ.)։

— Աղջի՛, Կարմիր դևը ո՞ր սարն ա գացեր։

— Էդ Սև սարի մեջեն։

Բռնեց մեջեն, գնաց։ Տեհավ որ Կարմիր դևը գալում ա։

Տղին օր տեհավ, պոռաց.— Խողածի՛ն, չըլլի որ Բոզ դևը սպաներ ես, ըստե էրևում ես։

— Ճշմարիտ ես ասում, ընդու սպաներ եմ, քեզի էլ կուշտը ղնեմ։

Դևի հերսն էլավ. ծամերը պիզապիզ էլավ գլխի վրեն, աչքերը մթնտաց, սիրտը փորի մեջ կտոր-կտոր էլավ. իսկն իմացավ, որ խողածինը իր աղբոր սպաներ ա։ Թռավ վեր, թևի վրիցը գերանը ձեռը առավ, խողածինին շըփըրտեց, գերանի խաստ գլոխը առավ գետինը, դընկըռգամա[1] վեց վերստ գնաց, զատն[2] ընկավ։

Խողածին թոզի միջից հ՚աչքեր բացեց, որ ինք սաղ ա։

Քաշեց սուրը, խասավ դևին, գլոխը կտրեց, հ՚ականշներն էլ վերցրեց, գնաց աղջկա կուշտը, ասեց.

— Էս գիշերը ղոնախ եմ քեզի, աղջի՛, ահա էս էլ հ՚ականշներ։

Աղջիկը օթախը վարդաջրեց, տղին ներս առավ, ասեց.

— Ես շատ շուտով քու ճամփախ իշկում ի, խողածի՛ն։

— Հ՚առեջ ես քեզի չըսի՞ քի. «Քո՛ւր, ընձի խաց տո՛ւ»։

— Որ ընձի քիքիր ես ասում, ախիրաթտա իմ աղբերն ես։

Հ՚առտուն էլավ, ձինը քաշեց, ճանապարհ ընկավ։

— Էդ ճամփով մի էթա, կիսան-կելմեզ[3] ա,— ասեց աղջիկը։

— Աստվածս վկա՝ ես էս ճամփով պըտի էթամ։

Ղանչեց աստված, գնաց. չալ չալիստան, սլաճրիյասլան[4]։

Էդ ճանապարհը դալրը[5] ղու չէր անում։ Գնաց մե քոշք ու սարի ըռաստ էկավ. տեսավ, որ մե աղջիկ կախ է հ՚ընկեր, իշկում ա։ Էս աղջիկը արևին ասում ա՝ դու դուրս մի հ՚էլնիր, ես կէլնիմ. աշխարքին պոլ իմ. որ շուրը խմում ա, պողղից կըլտըր, կըլտըր էրևում ա։

— Բարև քե՛զ,— ասեց,— աղջի՛կ։

---

1 Փայտ մի երբ ձգես, երկու ծայրերն փոփոխակի գետնին զարնելով կերթա (Ս. Բ.)։

2 Հեռուն (Ս. Բ.)։

3 Գնացող-ետ չեկող (Ս. Կ.)։

4 Մեծ անապատներ, օտար ծովեր (Ս. Բ.)։

5 Թռչունը (Ս. Բ.)։

— Ա՜յ խաղար բարին, իմ գլխին, իմ էրեսին էկար, դու թաքավորի որդի՛, էս Սև դևի մեքյան ա, ո՞վ կարներ ըստե գեր, որ դու էկեր իս։

— Սերդ ի ընձի ըստե բերեր ա։

— Սերով կենաս, խողածի՛ն։

— Սոված իմ, նազանի, մև թքյա խաց իջացրա, ուտեմ։ Խաց իջացրեց, տղեն կերավ ու ասեց.

— Սև դևն ո՞ր կողմն ա գացեր։

— Էդ Սև դևը ծովի ղրաղի սարը գնացեր ա ավղուշ։

Իսկը տղեն գնաց դեպի դևի ղեխը։ Տեսավ Սև դևը էն յանից դալում ա. ճին ու ջանավար տվե հ՝առեջն, մե գերան էլ դրեր թևին, ժողվեր՝ բերում ա. հ՝աչքն առավ խողածնին, ղանչեց.

— Ջըլլի՞ Բոզ դևին, Կարմիր դևին սպաներ իս։

— Դո՛ւ ասեցի՛ր. չե՛ս վախենում, քեզ էլ պրտի սպանեմ։

— Վա՛յ,— դև ասեց,— խո՞ղ էկեր՝ ընձի ծածկեր ա։

Սար ու ձոր դևի հ՝աչքին մթնան, ծամերը գլխի վրեն պիզ-պիզ էղավ. դալարն ընկավ դևի փոր, հ՝աչքները բրտեց։

— Խողածի՛ն,— ասեց դևը,— հ՝առաջս ընկիր, էսօր իրավունք չկա։

Առավ իր տունը գնաց, խացը կերան, դևը ասեց.

— «Խաց ու գինին, տեր կենդանին», քո տան պես արխային քնի, ես մուխաննաթ մարդ չեմ։

Քնավ։ Որ բարի լուսը բացվավ, խաց կերան, ղանչեց դևը.

— Խողածի՛ն, թատպիրդ տե՛ս, մեր կռիվը կռիվ ա։

Հ՝էլան, մտան մեյտան։ Տղեն քաշեց սուրը, Սև դևը վերցեց կյուրզը, խասան հ՝իբար. մինչի կեսօր կռիվ արին։ Էն ինչ դևն էր՝ տզի օսկրներ ջարդեց, էն ինչ տղեն էր՝ դևին թրով փըրբրդեց։

Դևը ձայնեց.— Խողածի՛ն, դարձի՛, բավական ա. էթանք խաց ուտելու։

Խողածնի թևից բռնեց, տարավ, ասեց.— Խողածի՛ն, ես էթում եմ քնելու[1]։

Դևը ուներ անմահութենի հ՝աղրուր, գնաց լողանալու։ Խողածնի յարեքը ցավ ա տալում, նրռնրռում ա։

---

1 Հաջորդում է փակագծում դրված «Խոսեց խողածնին» արտահայտությունը, որը ասացողի բացատրությունն է (Ս. Կ.)։

Իսկը դևի կնիկը էկավ խողածնի կուշտը.— Անումդ ի՞նչ ա,— ասեց։

— Աբրահամ փաշա,— ասեց։

Ասեց.— Ափսոս տղա ես, դևը քե խափեց՝ դնաց լեղանալու։

— Հ՚իմանամ դու իմ ծնող քուրն ես, էն հ՚աղբուրը ցուց տո՛ւ, ես էլ էթամ լեղանամ։

— Ա՜յ, ղուն էլ դիներ ընձի աղբեր չկա, պըտի ըլլիր ընձի աղբեր, որ դու էլար ընձի աղբեր, ես դինամ, դու։

Դևը սաղցավ, էկավ քնավ։

— Աբրահամ փաշա ջա՛ն. էլի գնա՛ էն աղբուրը, էն Կարմիր սարի տակն ա, լեղացի ու էն աղբուրը ծածկիր, ջուրը պաիա, շատ ջուտով արի՛։

Տղեն գնաց, էն աղբուրը՝ լեղացավ. սաղցավ, հ՚էլավ մորից մեկ։ Աղբուրը ծածկեց ու թողեց, էկավ ինքն էլ քնավ։

Դևն հ՚իմցավ.— Խողածի՛ն, հ էլիր, մեր կռիվը կռիվ ա։

Հ՚էլան, մտան մեյտան, մինչի վերջին կռվան։

— Բոյ ա, խողածին,— ասեց դևը,— ժամանակ չունենք կրռվելու։

Դարձան. տղեն մնաց, դևը գնաց՝ որ հ՚աղբուր չկա .«լալա ֆյոշուպ, յուրտի ղալուպ» [1]։

— Վա՜յ վա՜յ,— ասեց,— խողածին իմ աղբուրը դողացեր՝ տարեր ա։

Էկավ թեխ խողածի՛ն. ասեց.— Վերև աստված, ներքև քե եմ ապավիներ, իմ հ՚աղբուրը տո՛ւր, ես քեզի մեղա, դու ընձի ջոջ աղբեր, ես քեզի պզտիկ աղբեր, «խաց ու գինին, տեր կենդանին»։

Առավ դևին, գնացին հ՚աղբուրը բացին, լեղացան, սաղցան, էղան մորե մեկ։

Մե ժամանակ էդպես մնացին, օրերից մեկ օր տղեն դուրս հ՚էլավ։ Դևը ճամփու դրեց, ասեց տղին.

— Իմ ճակտից իրեք մազ քաշա. որտեղ որ նեղ կընկնիս, կրակի տո՛ւր, ես քու կուշտ հազր եմ։

Տղեն օրերից մեկը խասավ Սև ծովի ղրաղը. տեսավ քառասուն բաղրկյան կայնած ին, խարցրեց.

— Քանի՞ ժամանակ եք ըստե։

---

1 Կակաչը անցավ, տեղը մնաց (Ս. Կ.)։

— Քառասուն օր։

— Հ՚ընչի քառասուն օր ըստե եք։

— Աստված մեզի հ՚աչքից ձգեր ա, քամի չգալում. կյամիք չբանում։

— Ձեզ տիրացո՛ւ, տերտե՛ր, մոլլա՛ չկա՞։

— Շա՜տ։

— Ամեն իրեն կողմով իրեն աստված ապավինի։

Ամեն մարդ էլավ իրանց աստվածը ապավինեցին։

Աստված էլ քաղցրացավ, քամիքը փչեց. կյամիք տարան Ստամպոլու քաղաքից դուս բերին. բազրկյաններ ժողվան հ՚իրար վրա, ասին.

— Աստված սիրող էս մարդին մե աղ խարճլրդ տա։

Ամենը իր կողմով տվին, էղավ մի տոպրակ ոսկի։ Տղեն խարցրրեց բազրկյան բաշուց։

— Դու ո՞րտեղ պրտի իշնիս։

— Թաթոս բեկի խանը։

Խանեց, ուր փեշադը նշանց տվեց, ասեց.— Երբ օր ես իմ փեշագը հ՚օղորկի՝ էս ոսկին ըղրկի՛ր, դա։

Հինքը ընդոնցից ջոկնվավ, գնաց քաղաք։

Էդտեղ մի ջհուտ հ՚առեջ էկավ.— Բարո՛վ,— ասեց,— թաքավորի տղա՛, իմ գլխին, իմ հ՚էրեսին ես էկեր. հրամեցի, իմ տունը ղոնախ ես։

— Ջհո՛ւտ, էդ ի՞նչ թոմարի ձիավոր ըդտեղ կայնած ին։

— Մեր քաղաքի մեջ մե անիրավ աղջիկ կա. մե ձիան գլոխը սեհր արեր[1], քցեր ա գետինը, ըդուր վրեն պարապում են։

— Քել՚թա՛նք, տենանք, ի՞նչ գլոխ ա։

Գնացին, տեհան որ մե ձիան գլոխ ա, մե տաս ձիավոր էլ ըդտեղ կայնած ին, խարցրեց.

— Աղբե՛րք, դու ի՞նչ մարդիկ իք։

— Մենք իշխանավոր մարդի տղա ենք։

— Դե գնացե՛ք. տենամ, ի՞նչ թավուր իք վերցնում։

Ձիանը քշեցին, մղրաղը զանին գլխի մեջը՝ չկարցան վերցցին։ Նոպադ էկավ տղին, գնաց, զանեց մղրախը գլխի մեջ, կայնավ զենկուքի մեջ, որ թափ տվեց՝ ձիանը մեջքը օրթալըխից կոտրվավ. ու փոր-փոշման դարձավ։

---

1 Կախարդեր (Ծ. Բ.)։

— Ջհուտ աղբե՛ր, ընձի մե ձի,— ասեց տղեն։

— Իմ հորեղբոր մե ձի կա, մե տոպրակ օսկու ա տալում։

Տղեն փեշադը տվեց, ասեց.— Տա՛ր Թաթոս բեկի խանը, տու բաղրկյան պաշուն, մե տոպրակ օսկի կա ա՛ռ, արի՛։

Գնաց, տոպրակ առեց, էկավ. տվեց իր հորեղբոր, ձին առավ. տվեց Թաքավորի տղին։ Թաքավորի տղեն խեծավ, գնաց, գլխի վրեն կայնավ. զարկեց մզրախով, գլոխը վերցրեց, տարավ, զանեց Թաքավորի սարային։

Ջհուտը գնաց, նստավ խնամաքարի վրեն, ասեց.— Իսկը մկա ես՝ իմ խարսը պրտի տանեմ։

Աղջկա խեր ասեց.— Մայիս ամսին իմ վրեն կռիվ գալող մարդիկ կան. Թ'որ էրթա, էնոնք էլ հետ տա, ես իմ աղջիկ կտամ ընդու։

Մնաց մայիս ամսին, տղեն էլավ քնուց՝ որ ճշմարիտ ա, ղոշուն էկեր ա, աստղին հաշիվ կա, ղոշունին չկա, զարմացավ, կրակ էլ ըլլեմ, չեմ կանար ըսղունցը էրեցնի։ Նստավ, միտ արավ, իր Սև ղև աղբերը ընկավ միտքը, ջղդանից խանեց մաղը, տվեց կրակ, տեսավ հայաքին մե ղոշատ[1] ղևի Թևի վրեն հ'իր առեջ կայնուկ ա։

— Աղբե՛ր,— ասեց,— աշխարք ավիրեմ, Թե չիքեմ։

— Էդ հալ ղոշուն իմ վրեն էկեր կռիվ։

Կզացավ, գետնիցը մե խորոմ խոտ վերցեց. օլրեց, արավ ջով[2], փաթթեց տղի գլոխը, ասեց.

— Էգ ջով Թող գլոխդ, որ կռվի մեջ ճանաչեմ, քեզի չզանեմ։

Գերան գցում էր, վաթսուն չատր մե տափնում էր, մեր մանուկ ուրացավ, չգիցան էս զազապ։

Դևը էկավ տղի մոտ, ասեց.— Իմ ճտկտից մազ քաշա, զիր ճզդանդ, ես կէթամ, մկա քու քուրը վախեցավ, մինակ ա։

Մազը քաշեց, Սև դևը գնաց։ Տղեն էկավ, պատմեց ջհուտին Թե՝ ես ղոշունը ջարդեցի։ Ջհուտը վերցուց իշխանավոր մարդիկաց ու աղջկա հերը, գացին կռվի տեղ՝ ջանդկներ տենան, օղորթ ա, Թե սուտ։ Տեհան օղորթ ա։ Էկան, աղջիկը տվին տղին, դրին մե կառեթ. աղջկան էլ մե կառեթի մեջ, քաղքից դուրս էլան։

Հինգ հարիր ձիավոր էլ դրեց հետ, գացին։ Իրեք գիշեր, իրեք ցերեկ գացին։

---

1 Մեծ գերան (Ս. Բ.)։

2 Կեմ (Ս. Բ.)։

Տղեն ասաց.— էթաս, տենամ էս գիշեր, թե իմ կնիկ քո՛ռ ա, քեչե՛լ ա։

Աղջկա կառեթ էդ ձիավորներու վերի գլոխ կայնուկ էր։ Գնաց նշանածին տենալու։ Տեսավ որ չատրրին մեջ քնած ա. իսկ չատրրի փեչաղներր քանդեց, մտավ ներս. շամտներ չորս կողմ վառվում են, իսկ գնաց նշանածի վրեն նստավ։

Սեհրպաղ էր, սեհր արեր էր։

Տղեն հ'էրեսները պաչեց՝ չիմացավ, կրճմտեց՝ չիմացավ։ Տեսավ ծծերի վրեն կոճկած ա. կոճկները բացեց, ծծերը դուրս բերեց, տեսավ որ ոսկե ժընճըլով մև անգին քար քցած էդոր ծծերի մեջը. որ քարը էրևաց, լուսը տվեց չատրրի մեջը։

Տղեն տեսավ, որ էդ քարը ճրագի պես վառվում ա, հանեց, դրեց ուր ջեպը. կղավ կուշտ պաչեց ու գնաց ուր չատրրը։

Ճամփեն մտածեց՝ էս ինչ քար ա. որ բացեց սև ղառղառի պես մև ղուշ ղարկեց ու էդ քարը ըգուր ձեռից առավ, խաբեց, չատրից դուրս բերեց, դարձավ վրեն։

— Տղա՛,— ասեց,— էս էլ զոռպութեն չէ, որ աղջիկը բերես։

Դարձավ, տղին շիքեց ղաթր, հեծավ։

Աղջիկը հ'իմացավ, որ իր անգին քար իր ծծերի մեջ չէ.— Վա՜յ վա՜յ,— ասեց,— տարավ տղեն։

Ջհուտ էլավ, թուղթ իշկեց՝ որ էրեր ա ղաթր, հեծեր՝ կէրթա։

Հ'էլավ ընկավ էտևը, մինչի լուսը բացվավ խասավ Սև ծովի ղրաղը. տեսավ մե տղա, էկեր ղայեղով իրան համար ցախ ա ժողվում։

— Այ տղա՛, էդ ինչ ցախ ա ժողվում ես։

— Ընձի հարսանիքի ցախ ժողվում եմ։

— Ես քեզի համար եմ էկեր, թարկը տո՛ւր էդ ցախին։

Տղեն դարձավ իշկեց աղջկան, խելքը թռավ, թառ ու մառ էլավ։ Ցախը թալեց, աղջկան տարավ, ծովից հանեց դուրս։

— Գնա՛, մե չարսապ բեր, առնիմ իմ վրեն, էթանք ձեր տունը,— ասեց աղջիկը։

Տղեն էլավ, գնաց թրխ տունը, իսկ աղջիկը ղայեղը դարձրեց ծովի մեջ, գիշեր, ցերեկ գնաց, մե օտար քաղքից դուրս էլավ։

Առատուն՝ աղոթրանախառն տեսավ ծերացած խալիվոր ծովի հ'ափուն նստեր՝ լվացվում ա։

— Բա՛րև քեզի,— ասեց։

— Հազար բարի՜, որդյակ ազնիվ։

— Հայրի՛կ, էրեխից ի՞նչ ունիս։

— Ունեմ յոթը աղջիկ։

— Հայրի՛կ, գաս ընձի էլ էնիս քեզի աղջիկ, ըլենք ութը։

— Որդյակ,— ասեց,— չեմ կարող պահել։

— Հայրի՛կ, հ՚ընչի՞. ինչ փեշով ես կառավարվում։

— Ազնիվ որդի՛, ես փինաչի եմ, օրական կառնիմ տասը հաց, յոթը հացը կտամ յոթ աղջկան, էրկուս էլ կառնինք մեզի մարդ ու կնիկ, էնտեղ կմնա մեկ։

— Հայրի՛կ, էն մե հացն էլ ընձի։

— Արի՛, ջուխտ մաշիկ հ՚ավելորդ փինա կանեմ, իմ հ՚էրսին գաս։

Աղջկան առավ ղայեղից ցած։

— Հայրի՛կ,— ասեց աղջիկը,— օրական մե ոսկի կտաս, մե մարդ կբռնիս, որ իմ ղայեղին մուղաթ կենա։

Աղջիկը գնաց տունը, տեսավ շատ աղքատութենի մեջ ին, իր գլխից մե լյայլուխ տվեց հալիվորուն, ասեց.

— Տա՛ր պազար, ըսդոր գինը չորս հարիր մանեթ ա։

Խալիվորը տարավ ծախեց, փարեն տվեց աղջկան։

— Էս հարիր մանեթը կտաս յորղան դոշկի. հարիր մանեթն էլ կտաս եմակի, հարիր մանեթն էլ կտաս շորի. հարիր մանեթն էլ կտաս ապրըշմի, ղնայուղի։

Տարավ հաջողակ հալիվորը ամեն էլ կատարեց։

Աղջիկը օրական շիքեց լյայլուխ, հալիվորը ծախեց. հա՛ ծախեցին, հարստացան։ Քաղաքին մեջ էլ մե մեծ վաճառական էդ խալիվոր դարձավ։

Էդ քաղաքին մեջ մե թաքավոր կար, էդ թաքավորին մե տղա ուներ, եռեսունը ինոը աղջկա հետ նշանվեր էր, կպտրտեր՝ որ մեկ էլ առներ, որ քառասուն թմեր, որ իր քեպինը կտրեր. էկավ էդ լյայլուղից մեկը խալիվորի ձեռը տեսավ, ասեց.

— Խալիվո՛ր, էս ո՞վ ա արեր։

— Իմ աղջիկը։

— Քելե՛, էթանք, քո աղջիկը տենանք։

Գացին, տեսան. նշան տվեց աղջկան, նշան առավ։

Աղջիկը ասեց էն թաքավորի տղին.— Քու մեկել կընկտերի հետ առատուն պըտի սեր էնիմ ծովի ղրաղը։

Դալալ քցեց քաղաքի մեջ, պոռացին քի անուն որձեղեն ըլնի, քաղքից դուրս չըլնի, որ ընդոր կընկտրներ ծովի ղրաղը սեյր անեն։

Իսկ էդ աղջիկ մյուս աղջիկներին բերեց, իր ղայեղի վրե կայնեցրեց. խափեց աղջիկներին, լցեց ղայեղը, առավ հ'ընկավ ծովի էրեսը։

Էդ աղջիկը ասեց.— Մենք քառասուն հոգի՝ կանանք մե մարդի ումուտի՞ն մնանք։

— Չէ՛,— ասին մյուսները։

— Դու ընձի կլսաք, որ ամեքիդ մե-մե թաքավորի տամ։

— Հա՛,— ասին։

Առավ ու գնաց էդ ծովի հ'էրեսով, գացին Ստամպոլա կողմիցը դուս հ'էլան մե քարափից։

Քարափին քառասուն հարամի բնակվում էին. էկան աղջիկների առաջները կտրին։

Աղջիկը պոռաց.— Դու ո՞ւր ես դալում, ձեզի համար ենք գալում, դո՞ր ես թեթևանում։

Էդ թաքավորի աղջիկը, առավ էդ քառասուն աղջիկն էլ, դուրս հ'էլավ։ Ամեքուն մեկը տվեց, ինքն էլ հարամուբաշուն առավ։ Ղըրկեցին Ստամպոլա օխտը տարվա թունգ գինի բերին, էլան սաղի[1]։ Ամենայն մե աղջիկ իրանց մարդին էլան սաղի, էնքան խմցրին, որ տեղպստեղ թմրեցրին։ Որ հարամիքը վեր հ'ընկան, քաջին հարամիքի սրերն, հարամիքի վզերը կտրին, ընղոնց շորերը հագան, ասպապը կապին, ձիանքը հեծան ու էդ կետուկները կտրին, գալողին մորթեցին, թալնեցին ու սպանեցին։

Էդ աղջիկների մեծի անունը դրին Քեսեքես սուլթան։

Ստամպոլա մեջ գողութեն շատ էր բանում, թաքավորը զրուցեն էրավ Քեսեքես սուլթանին. «Իմ քաղաքի միջի գողն էլ որ կտրես, իմ աղջիկն էլ կտամ քեզի»։

Գիրը որ հասավ Քեսեքես սուլթանին, աղջիկներին թողեց ըդտեղ, հ'ինքն հ'էլավ, գնաց քաղաքին մեջ. տեսավ շատ դեվրեշներ կան։ Հինքն էլ գնաց դեվրեշխանե, մե ձեռք դեվրեշի շոր առավ, խաղավ, մե քեշքուլ էլ առավ ձեռը. տեսավ դեվրեշներ քաղքից դուրս հ'էլան. հ'ինքն էլ խետներ դուրս էլավ. գնացին, լցվան մե զաղա։

---

1 Գինի տվող (Ս. Բ.)։

Դեվրեջների գլխավորը ձայնեց.— Որը որ մեր մեջ հ'ավելորդ էկեր ա, էթա թաքավորի խազինեն կտրի, բերի։

Համպրեցին որ Քեսեքես սուլթան հ'ավել ա։

Չորս մարդ տվին ընդոր, գնացին թաքավորի խազինեն կըտրելու։ Կտրին, բերին, լցին զաղեն։

Քեսեքես սուլթան մե շաբաթ մնաց. ըդոնց վեր ու դիրը, նըստել-կայնելը հ'իմացավ. օրերի մեկ օր՝ գնաց, խասավ աղջիկներին ու վերցրեց, էկավ զաղի դուռը կտրեց, քաշին սրերը ու ներս մտան, ոչխարի նման բոլորը սուրի քաշեցին։

Հ'առատուն լուսը բացվավ, ջառ քցին քաղաքը, ղանչին.— Աստված սիրող, վիր մալն օր գացեր ա, գա՛, իր մալը տանի։

Էկան, ամեն մարդ իր մալը ճանչցան ու տարան. թաքավորն էլ էկավ իր խազինեն տարավ։ Բերավ աղջիկն էլ Քեսեքես սուլթանի վրեն պսակեց։

Մե էրկու տարի անցավ, թաքավորը վախճանավ։ Բերին Քեսեքես սուլթանին արին թաքավոր, էն էլ ինչ որ որձեղեն կար, չթողեց ներս, աղջիկներին հ'առեջ քաշեց, էրեց վազիր, վոքիլ, մեյտար, չպուխչի։

Աղջիկն ինչպես որ պսակվեր ա, թաքավորի աղջկա հ'էրեսը չէ էթում։ Մեկ օր թախտի վրա նստած էր, տեսավ Աբրահամ փաշեն, բոբիկ, թումպանթափ, ջհուտն խելքը գլխիցը առեր՝ ցնդուկ, ցնդուկ էթում, ղազ ա պահում։

Թաքավորը բոռաց.— Ամա՜ն, էդ ղազարածին բռնե՛ք։

Ձեռաց խասան, բռնեցին, բերին թաքավորի հ'էրեսն։

Թաքավորը հարցրեց.— Ա՛յ տղա՛, դու ի՛նչ մարդ իս։

— Ջհուդի ղազարածն եմ։

— Այ տղա՛, գիշերը ջհուդի դռները բաց կթողես, որ հ'առատուն իմանամ բաց չես թողեր, քեզի կդնեմ կրակի մեջ, կվառեմ։

Հարցուց.— Ջհուդն ըսկի քնո՞ւմ ա։

— Չէ՛, թաքավոր։

— Ընչի՞ չի քնում։

— Թաքավորի աղջիկից վախենում ա։

Թողեցին. տղեն գնաց ղազերը պահելու։

Հ'իրկուն մեկ էլ բերեց, տղին խրատեց։

Տղեն գիշեր դռներ բաց թողեց։

Քեսեքես սուլթան տաս խոգի վերցեց, գնաց ջհուդի դուռը

րոնեց։ Իսկ ջհուդը բռնեց, բերեց թաքավորի տիվանխանեն։ Ինքը դնաց թաքավորական թաղը դրեց, նստավ թախտի վրեն. ղանչեց ջհուդին, բերեց հ'իրան էրեսը, ասեց.

— Ջհո՛ւդ, ո՞ւր ա իմ անդին քարը։

— Քեզ մեղա՛, քու աստրծուն մեղա՛, դրեր եմ իմ օթախների հիմը, շարեր եմ վրեն։

— Ձեմ դիտում, իմ անգին քարը բե՛ր։

Էն սահաթը բերեց։

— Հա՛, ջհուդ, ուղում եմ քեղնից Աբրահամ փաշի խելքը։

Մե տաշտ ջուր բերին, դրեցին արանքները. ջհուդը գիր առավ ձեռ, գրեց. Աբրահամ փաշին էլ կայնեցրեց էնտեղ, ուզեց ջհուդից Աբրահամ փաշի խելքը։

Աբրահամ փաշի խելքը բերեց։ Որ բերեց իշկեց իր ղլըխին, լացավ, ու քիթ ու բերնի վրեն վեր ընկավ։

Թաքավորը ասեց.— Ինչո՞ւ կուլաս, այ տղա՛։

Նորեն կայնավ, իր գլխի գալածը թաքավորին գանգատ արավ։

Թաքավորը ասեց.— Իգի սուտ ա։

— Չէ, թաքավո՛ր, սուտ չէ։

Ջհուդին սկսեցին բրդել։

Աբրահամ փաշին համամլամիշ արին, բերին։ Էն հ'առաջվա գեստերու պես նորոգեց։ Ղանչեց.— Էն աղջիկը որ ղու կորցրեր ես, ըստեղ ըլլի կճանաչե՞ս։

— Այո՛, ըսպա չե՞մ ճանչնար։

Թաքավորը գնաց իր աղջկա կիլիմը[1] հագավ, անդին քարը քցեց վիզը, էկավ դռնից։

Տենալու պես ճանաչեց, հասավ աղջկան։

Աղջիկը ասեց.— Մե կնիկ էլ ընձի կա, էն էլ կտամ քեզի։

Աբրահամ փաշեն էրկու կնիկ ունեցավ։

Հարամի աղջիկներին էլ վազիրի, վաճառականի տվեց, թաքավորութեն էլ տվեց վեզիրին։

Իրան ծանտրը թողեց, թեթեը վերցրեց, ղանչեց աստված, քաղաքից դուրս հ'էլավ, օրերից մեկը հասավ իր հոր երկիր, իրան հարսանիք արավ։

---

[1] Ձեր (Ս. Բ.)։